ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բաց կառավարման գործընկերություն/Հայաստան նոր գործողությունների ծրագրում ներառելու համար

Էկոնոմիկայի նախարարություն

- Հայաստանի Հանրապետությունից ալմաստների արտահանման նպատակով Քիմբերլի հավաստագրի տրամադրման համար էլեկտրոնային հայտերի ընդունման համակարգի ներդրում,
- Հյուրանոցային տնտեսության օբյեկտների՝ որակավորում ստանալու համար հայտերի ընդունման էլեկտրոնային համակարգի ներդրում,
- «Ժամանակավոր ներմուծում (արտահանում)՝ վերամշակման համար» ռեժիմով ներմուծված (արտահանված) ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք նվազագույն արդյունքի, ինչպես նաև վերամշակումից գոյացած թափոնների, մնացորդների և կորուստների քանակության հաշվարկի վերաբերյալ եզրակացության տրամադրման համար հայտերի ընդունման էլեկտրոնային համակարգի ներդրում,
- ՀՀ-ում թանկարժեք մետաղներ զտարկողների և թանկարժեք մետաղներ հարգորոշողների ու հարգադրոշմողների որակավորման վկայականի տրամադրման համար հայտերի ընդունման էլեկտրոնային համակարգի ներդրում:

Արդարադատության նախարարություն

- Էլեկտրոնային նոտարի ամբողջական համակարգի ներդրում,
- Էլեկտրոնային ՔԿԱԳ համակարգի ներդրում,
- Հանրային ռեգիստրների վարման (գրանցման) միասնական սպասարկման կենտրոնների ներդրում:

Տարածքային կառավարման նախարարություն

- Համայնքի բնակչության մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը,
- Տեղական ինքնակառավարման համակարգում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրում ու դրանց կիրառում:

Գյուղատնտեսության նախարարություն

- Ագրարային ոլորտի հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնում՝
  - «Ֆերմերների ազգային միության», «Գյուղատնտեսական ասոցիացիաների ֆեդերացիա», «Պահածոյագործների և հյութ արտադրողների», «Հայաստանի կոնյակ արտադրողների» և «Հայ գինեգործների» իրավաբանական անձանց միությունների հետ համագործակցության ընդլայնում՝ գյուղատնտեսության ոլորտի առջև ծառացած խնդիրների համատեղ քննարկման, իրավաօրենսդրական փաստաթղթերի նախագծերի մշակմանն մասնակցության ապահովման միջոցով:

<u>Մշակույթի նախարարություն</u>

- Մշակութային ծառայությունների ոլորտում տեղեկատվության և ծառայությունների մատչելիության ապահովման ուղղությամբ կշարունակվի.
  - Նորացվել 2009 թվականից մեկնարկած գրադարաններից օգտվողներին տրամադրվող էլեկտրոնային-տեղեկատվական աղբյուրները («EBSKO» և ՌԴ-ի խոշորագույն էլեկտրոնային ռուսալեզու հավաքածուների «Integrum World» տեղեկատվության տվյալների փաթեթներ).
  - Հայաստանի թանգարաններում 2010 թվականից սկսած տեղեկատվական սենսորային կրպակների տեղադրման գործընթացը, ինչն ապահովում է թանգարանների ֆոնդերում գտնվող մշակութային արժեքների վերաբերյալ տեղեկույթի հանրահռչակումը.
  - Էլեկտրոնային տեղեկատվական համակարգերի, տեղեկատվական շտեմարանների կայքերի և վիրտուալ ցուցադրությունների ներդրման և գործարկման գործընթացը, ինչի արդյունքում ստեղծվել են՝ «Գորգերի վիրտուալ թանգարանը», 3D ձևաչափ ինտերակտիվ խաղեր և վիրտուալ ցուցադրություններ.
  - Մշակութային ժառանգության թվանշայնացման գործընթացը, ինչը հնարավորություն է ստեղծում իրականացնել թանգարանային արժեքների հանրահռչակումը տեղեկատվական շտեմարանների կայքերի և վիրտուալ ցուցադրությունների միջոցով.
- Մշակութային ծառայությունների ոլորտում ծառայությունների առավել թափանցիկության ապահովման ուղղությամբ իրենց աշխատանքները կշարունակեն ՀՀ մշակույթի նախարարին կից գործող տարբեր ոլորտների

զարգացմանն ուղղված մասնագիտական տարբեր խորհուրդներ (թատերարվեստ, երաժշտարվեստ, կինոարվեստ, կերպարվեստ, գրականություն), դրամաշնորհային ծրագրերի մրցույթների հանձնաժողովներ և աշխատանքային խմբեր, որոնց կազմերում ընդգրկված են արհեստավարժ մասնագետներ ու անկախ փորձագետներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, ովքեր հասարակական հիմունքներով խորհրդատվություն են իրականացնում: Միևնույն ժամանակ կանոնավոր կերպով նախարարությունը խորհրդատվություն է տրամադրում հասարակական կազմակերպություններին և անհատ ստեղծագործողներին:

<u>Պաշտպանության նախարարություն</u>

- «Բարեվարքության ամրապնդումը և կոռուպցիայի նվազեցումը պաշտպանության ոլորտում»

<u>Ի գիտություն</u>.

«Բարեվարքության ամրապնդում» նախաձեռնությունը ՆԱՏՕ-ի հովանու ներքո միջազգային հասարակական կազմակերպությունների և մի շարք պետությունների կողմից իրականացվող ծրագիր է, որի նպատակը պաշտպանության ոլորտում կոռուպցիայի նվազեցումն ու բաց կառավարման էթիկայի բարելավումն է: Նախաձեռնությունը մշակվել է 2007թ. նոյեմբերին Եվրատլանտյան գործընկերության խորհրդի կողմից՝ Պաշտպանական հաստատությունների կերտման գործընկերության գործողությունների ծրագրի (ՊՀԿ-ԳԳԾ, PAP-DIB - Partnership Action Plan on Defence Institution Building) շրջանակում: Նախաձեռնության զարգացման և կառավարման նպատակով ստեղծվել է Վստահության հիմնադրամ, որում ընդգրկված են Բելգիան, Միացյալ Թագավորությունը, Լեհաստանը, Նորվեգիան և Շվեյցարիան: Գործընկերներն են «Թրանսփերնսի Ինթերնեշնլ» միջազգային հասարակական կազմակերպությունը «Զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության Ժնևի կենտրոնը», ԱՄՆ պաշտպանական ռեսուրսների կառավարման ինստիտուտը և այլ շահագրգիռ հաստատություններ:

ՀՀ ՊՆ ներկայացուցիչների ակտիվ մասնակցությունը նախաձեռնության շրջանակում իրականացվող դասընթացներին ու

միջոցառումներին հիմք է հանդիսացել դրան միանալու ուղղությամբ կոնկրետ քայլերի ձեռնարկման համար:

2012թ. ԵԱՀԿ երևանյան գրասենյակի օժանդակությամբ հայերեն է թարգմանվել «Բարեվարքության ամրապնդումը և կոռուպցիայի նվազեցումը պաշտպանության ոլորտում լավագույն փորձի օրինակների ժողովածուն»: Նախքան նախաձեռնությանը պաշտոնական միանալը՝ ՀՀ պաշտպանության նախարարի կողմից հաստատվել է գործողությունների ծրագիր և դրա շրջանակում անցկացվել է «Ազնվության տեստ», որի նպատակն էր պարզել ՊՆ և ԶՈՒ ԳՇ յուրաքանչյուր ստորաբաժանման կողմից իր գործունեության շրջանակում առկա կոռուպցիոն ռիսկերի ընկալման և դրանց վերաբերյալ բացեիբաց խոսելու ցանկությունն ու կարողությունը: Ներքին ինքագնահատման արդյունքների հիման վրա որոշում է կայացվել 2013թ. պաշտոնապես միանալ Բարեվարքության ամրապնդման նախաձեռնությանը:

Միացմանը հաջորդող քայլը, որին արդեն ընթացք է տրվել, բարեվարքության ինքնագնահատման գործընթացն է: Այդ նպատակով կրկին ԵԱՀԿ երևանյան գրասենյակի օժանդակությամբ հայերեն է թարգմանվել Բարեվարքության ամրապնդման ինքնագնահատման գործիքը՝ հարցաշարը:

Ինքնագնահատման գործընթացը բաղկացած է երկու փուլից. տվյալ պետության կողմից լրացման ենթակա հարցաշար և դրա լրացմանն հաջորդող ՆԱՏՕ-ի փորձագիտական վերլուծության խմբի տեղական այցելություն, որի ընթացքում խումբը հանդիպում է տվյալ պետության ներկայացուցիչներին՝ հարցաշարին տրված պատասխանները քննարկելու համար: Հարցաշարի թիրախ է հանդիսանում ոչ այնքան օրենսդրությունը, որքան իրավակիրառ պրակտիկան: ՆԱՏՕ-ի փորձագիտական վերլուծության խումբն իր տեսակետներն է հայտնում առաջավոր փորձի վերաբերյալ և տվյալ պետության հետ միասին ուսումնասիրում, թե ինչպես վերջինս կարող է ամրապնդել իր պաշտպանական հաստատությունների բարեվարքությունը և նվազեցնել կոռուպցիոն ռիսկերը:

Ինքնագնահատման գործընթացին զուգահեռ ՊՆ-ն ակտիվորեն մասնակցում է Նախաձեռնության մեկ այլ ձևաչափի ևս. պաշտպանության ոլորտի հաստատություններում բարեվարքության ամրապնդման և կոռուպցիոն ռիսկերի նվազեցման ուսումնական մոդուլի մշակման աշխատանքներին: Նախատեսվում է պաշտպանական ոլորտի համար հակակոռուպցիոն, կառավարման էթիկայի բարելավման ուղղված հատուկ դասընթացի մշակում, որը կներառվի ռազմաուսումնական հաստատությունների և վերապատրաստման դասընթացների պարտադիր ուսումնական ծրագրերում:

Հարկ է նշել, որ թեև բարեվարքության ինքնագնահատման գործընթացը հիմնականում նպատակաուղղված է պաշտպանության ոլորտին, այն կարող է կիրառվել նաև անվտանգության ոլորտի այլ գերատեսչությունների նկատմամբ:

<u>Արտակարգ իրավիճակների նախարարություն</u>

- Պետության կողմից մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանն ուղղված, իրականացվող գործառույթները առավել մատչելի և դյուրին դարձնելու, պետական ծառայողի և քաղաքացու (տնտեսվարող սուբյեկտի) միջև շփումները կրճատելու նպատակով՝ «մեկ պատուհանի» սկզբունքի կիրառում:

<u>Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</u>

- Ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգի ներդրում

<u>Ի գիտություն</u>.

2012 թվականից ներդրվում է ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգ, որը գործում է «մեկ պատուհանի» սկզբունքով, հնարավորություն տալով ՀՀ քաղաքացիներին աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտին վերաբերող որևէ հարցով դիմել միասնական ընդունարան և ստանալ հնարավոր խնդիրների լուծումը՝ բացառելով դրամական վճարների (կենսաթոշակներ, նպաստներ կամ դրամական օգնություն) համար դիմելիս քաղաքացի-սոցիալական աշխատող անմիջական կապը, դրանով նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը: 2013թ. օգոստոսի

դրությամբ հանրապետությունում գործում են ինտեգրված սոցիալական ծառայությունների 19 կենտրոններ, ևս 35 կենտրոններ նախատեսվում է ձևավորել մինչև 2017թ.:

<u>ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանություն</u>

- ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության կողմից քաղաքացիների սպասարկման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով մեքենաների գրանցման, վարորդական իրավունքի տրամադրման, տուգանքի վճարման հետ կապված մեկ պատուհանի սկզբունքով ծառայությունների մատուցման կիիրառումը ներառել ՀՀ մարզերում:

<u>Քաղաքաշինության նախարարություն</u>

- Բնագավառի նորմատիվատեխնիկական բազայի շարունակական կատարելագործում՝ շինարարական նոր նորմերի մշակում և դրանց օգտագործման մատչելիության ապահովում.
- Քաղաքաշինության բնագավառի գործունեությունը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի կիրարկման պրակտիկայի և վարչարարության բարելավում.
- Քաղաքաշինական թույլտվությունների տրամադրման էլեկտրոնային համակարգի ներդրում և համայնքների կողմից դրանց փուլային գործարկում.

  <u>Ի գիտություն</u>.

  Հանրապետությունում շինարարական թույլտվությունների էլեկտրոնային համակարգի ներդրման աշխատանքներին աջակցելու նպատակով ՀՀ վարչապետի 2013թ. հուլիսի 10-ի N548-Ա որոշմամբ ստեղծվել է աշխատանքային խումբ, որին հանձնարարվել է մշակել և սահմանված ժամկետում ՀՀ պետական կառավարման համակարգի բարեփոխումների հանձնաժողով ներկայացնել շինարարական թույլտվությունների էլեկտրոնային համակարգի ներդրման տեխնիկական առաջադրանքը:

- Էլեկտրոնային համակարգի միջոցով քաղաքաշինական գործընթացների թափանցիկության և հաշվետվողականության մատչելիության ապահովման նպատակով՝ ստանդարտ չափորոշիչների սահմանում գերատեսչությունների և պետական հիմնարկների պաշտոնական կայք-էջերի համար, այդ թվում՝

որոշակի պահանջներ դրանց կառուցվածքի, բովանդակության, լրացման մեթոդաբանության, թարմացման պարբերականության վերաբերյալ, ինչը կնպաստի տեղեկատվության տրամադրման ծավալների ընդլայնմանը և կապահովի կայքի մատչելիությունն օգտվողների համար:

<u>Ֆինանսների նախարարություն</u>

- Ծրագրային բյուջետավորման ներդրման շարունակում

<u>Պետական եկամուտների կոմիտե</u>

- Ազգային փոստային օպերատորի («Հայփոստի») ստորաբաժանումներում հարկ վճարողների սպասարկման կետերի ցանցի գործարկում,
- Ցանցային կապի միջոցներով ՀԴՄ-ների կողմից օրվա ընթացքում իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ տեղեկության ուղարկման համակարգի ապահովում՝ ՀԴՄ կիրառող բոլոր տնտեսվարող սուբյեկտների համար,
- ՀՀ պետական սահմանի «Բագրատաշեն», «Բավրա», «Գոգավան» անցման կետերի արդիականացում,
- Մաքսային ձևակերպման ոլորտում՝ նախնական հայտարարագրման և ամբողջովին էլեկտրոնային հայտարարագրման համակարգերի ներդրում,
- Հարկային և մաքսային ծառայողների պարտադիր վերապատրաստման համակարգի ներդրում:

<u>Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե</u>

- 2012թ. հունվարի 1-ից գործարկվել է անշարժ գույքի կադաստրի վարման համար նախատեսված՝ «Հայաստանի անշարժ գույքի տեղեկատվական համակարգ» էլեկտրոնային համակարգը, ինչպես նաև հանրությանը անշարժ գույքի կադաստրի էլեկտրոնային ծառայությունների մատուցման համար նախատեսված www.e-cadastre.am կայքը, որը, ի թիվս այլ էլեկտրոնային ծառայությունների, հնարավորություն է տալիս նաև էլեկտրոնային եղանակով ներկայացնել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման կամ տեղեկատվության տրամադրման դիմումները»:

<u>Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով</u>

- Ունենալ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էլեկտրոնային ռեեստր,

- Բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց թղթային տարբերակով հայտարարագրումից անցնել էլեկտրոնայինի,
- Հայտարարագրերի հրապարակայնացումն իրականացնել հանձնաժողովի կայքէջի միջոցով՝ ավտոմատ կերպով,
- Հայտարարագրերում ներառված տվյալների հավաստիության ստուգման և վերլուծության համար ստեղծել էլեկտրոնային տեղեկատվական շտեմարան՝ փոխկապակցված համապատասխան պետական մարմինների ու տեղական ինքնակառավարման մարմինների համապատասխան տեղեկատվական բազաների հետ,
- Անցում կատարել քաղաքացիներից բարձաստիճան պաշտոնատար անձանց շահերի բախման և էթիկայի կանոնների խախտումների վերաբերյալ տեղեկատվության էլեկտրոնային եղանակով դիմումների ստացմանը,
- Հանձնաժողովի փաստաթղթաշրջանառության էլեկտրոնայնացում և շաղկապում կայքէջի ու տվյալների շտեմարանի հետ:

<u>Գյումրու ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի խորհուրդ</u>

Տեղական ինքնակառավարման ոլորտ

- Տարածքային և տեղական ինքնակառավարման բարեփոխումների հայեցակարգերի և օրենսդրության նախագծերի մշակումները դարձնել հանրամատչելի, հանրային, ոչ կառավարական մասնագիտական և ոչ մասնագիտական մասնակցություն ապահովել բոլոր հնարավոր եղանակներով:
- Պարտադրել տեղական ինքնակառավարման մարմիններին կատարել ՏԻՄ և բյուջետային օրենսդրություններով սահմանված պարտավորությունները, այդ թվում.
    - Հանրային պատշաճ իրազեկում ապահովել կայանալիք ավագանու նիստերի մասին՝ հրապարակելով հրապարակային ծանուցումները,
    - Պատշաճ պայմաններ (տարածք, նստատեղեր և այլ) ապահովել ավագանու նիստերին հանրության ազատ, առանց խոչընդոտների մասնակցության համար,

- Բոլոր համայնքներում սահմանել ավագանու նստավայրեր՝ դրանցում համապատասխան, օրենքով սահմանված պարտադիր հրապարակումների ծավալներով:
- Համայնքներում հանրային լսումներ-քննարկումներ իրականացնել համայնքի զարգացման տարեկան բյուջեների, քառամյա ծրագրերի և համայնքային կարևոր խնդիրների և դրանց լուծումների մասին՝ ապահովելով հանրության պատշաճ մասնակցությունը դրանցում և լայն հանրային իրազեկումը՝ ինչպես մինչև քննարկումը, այնպես էլ քննարկումների ընթացքի և արդյունքների մասին:
- Բոլոր համայնքներում ընդունել ավագանիների՝ օրենքով նախատեսված կանոնակարգը (գործունեության աշխատանքային փաստաթուղթը),
- Բոլոր համայնքներում ընդունել համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը:

▪ Պարտադրել տեղական ինքնակառավարման մարմիններին կատարել «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով սահմանված պարտավարությունները՝ ինչպես տեղեկությունների հանրայնացման/տրամադրման պրոակտիվ ռեժիմով (հոդված-7), այնպես էլ քաղաքացիների բանավոր և գրավոր հարցումներին պատասխանելու ռեակտիվ ռեժիմով (հոդված-9):

▪ Պարտադրել տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայությամբ գործող և համայնքային բյուջեից ֆինանսավորվող բոլոր կազմակերպություն-ներին (ՓԲԸ, ՀՈԱԿ)՝ մանկապարտեզներ, արվեստի, երաժշտական, սպորտի դպրոցներ, թանգարաններ, գրադարաններ և այլն, կատարել «Տեղեկատվու-թյան ազատության մասին» օրենքով սահմանված պարտավարությունները՝ ինչպես տեղեկությունների հանրայնացման/տրամադրման պրոակտիվ ռեժիմով, այնպես էլ քաղաքացիների բանավոր և գրավոր հարցումներին պատասխանելու ռեակտիվ ռեժիմով:

▪ Օրենսդրական բարեփոխումներ կատարել հետևյալ ուղղություններով.
  - ՀՀ ընտրական օրենսգրքում և տեղական ինքնակառավարման մասին օրենքում վերականգնել համայնքապետերի՝ 2-ից ավելի անգամ

անընդմեջ համայնքապետ ընտրվելու սահմանափակումը, այդպիսով վերացնել համայքապետերի ցմահ վերընտրության հնարավորությունը:

- Օրենքով սահմանել ՏԻՄ մարմինների՝ համայնքապետերի և ավագանու անդամների շահերի բախումը, նկարագրել հնարավոր բախումների հանգամանքները՝ համապատասխան արգելքների սահմանմամբ:
- Օրենքով սահմանել ՏԻՄ մարմինների իրականացրած գնումների, մրցույթների, ծախսերի բոլոր մանրամասները՝ մատակարարները, մրցութային պայմանները, ծախսը, ձեռք բերված ապրանքները կամ ծառայությունը:
- Օրենքով սահմանել ավագանու նիստերի ուղիղ ինտերնետային հեռարձակումը՝ որպես համայնքային իշխանությունների պարտավորություն:

Հեռուստառադիոհեռարձակման ոլորտ

- Օրենսդրական փոփոխություններով պարտադիր դարձնել հեռուստառադիոկայանների սեփականատերերի անձանց հրապարակումը՝ ունեցած մասնաբաժիններով, և դրանց փոփոխությունները դարձնել հրապարակային՝ 10-օրյա ժամկետներում:
- Օրենսդրական փոփոխություններով առավել հրապարակայնություն ապահովել հեռուստառադիոդնկերությունների եկամուտների մասին՝ սկսած նույն աղբյուրից տարեկան մեկ և առավել տոկոս կազմող եկամուտներից՝ հրապարակելով եկամուտների աղբյուրները և չափերը:
- Պարտավորեցնել ՀՀ լիազոր մարմնին՝ տրանսպորտի և կապի նախարարությանը, տարեկան առնվազն մեկ անգամ հրապարակել Հայաստանի թափուր և զբաղեցված հեռուստառադիոհաճախականությունների ցանկը:
- Օրենսդրական փոփոխություններով ՀՌԱՀ-ի համար որպես պարտավորություն սահմանել մինչ օրս տեղի ունեցած հեռուստառադիոհաճախականությունների բոլոր մրցույթների հայտատուների և հետագա բոլոր մրցույթների մրցութային փաթեթների ամբողջական հրապարակումը:

- Օրենսդրական փոփոխություններով ՀՌԱՀ-ի անդամների համար սահմանել էթիկական ստանդարտներ՝ քաղաքական անկախության և շահերի բախման կանխարգելման մեխանիզմով:
- Թվային հեռարձակման անցման մասով.
    - Թվայնացման անցման ռազմավարություն մշակել և ներկայացնել հանրությանը:
    - Թվայնացման գործընթացը դարձնել թափանցիկ և հաշվետու, ապահովել հանրային հանգամանալից իրազեկում թվայնացման անցման մասին:
- Հայաստանի հանրային հեռուստաընկերության մասով՝ օրենսդրական փոփոխություններով.
    - Հիմնական հեռուստաալիքը օրենքով ազատել առևտրային գովազդից՝ լրացուցիչ հատկացնելով համապատասխան գումար պետական բյուջեից. արդյունքում՝ հանրությունը կշահի տարեկան մոտ 630 ժամ հանրային եթերաժամանակ (մոտ 27 ամբողջական օր), կվերանա գովազդ իրացնող ընկերության/ընկերությունների հետ կապված կոռուպցիոն ռիսկը:
    - Սահմանել ֆինանսական եկամուտների, ծախսերի, գնումների, մրցույթների, հեռուստահաղորդումների, աշխատակազմի ձևավորման և փոփոխման մասին առավել մանրամասն պարտադիր հաշվետվողականություն, քան նախատեսված է գործող օրենսդրությամբ:
    - Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի կազմում նշանակել միայն այն անձանց, ովքեր կունենան ոլորտային հասարակական կազմակերպություններից առնվազն 5-ի երաշխավորությունը կամ հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի կազմից 2 հոգուն նշանակել անձանց՝ միայն ոլորտային հասարակական կազմակերպությունների առաջադրած ցուցակից:
- Պարտադրել ՀՌԱՀ-ին կատարել «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքով նախատեսված իր պարտականությունները, մասնավորաբար.
    - Որակյալ վերահսկողություն իրականացնել լիցենզավորված հեռուստառադիոընկերությունների մրցութային հայտերում բերված

պայմանների և լիցենզիայի պայմանների կատարման նկատմամբ: Վերահսկողության մասին հրապարակել հանրային կիսամյակային հաշվետվություններ:

- Որակյալ վերահսկողություն իրականացնել հեռուստառադիոհեռարձակման ոլորտում ՀՀ գովազդային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ: Վերահսկողության մասին հրապարակել հանրային կիսամյակային հաշվետվություններ:
- Հրապարակել մինչ օրս տեղի ունեցած հեռուստառադիոհաճախականությունների բոլոր մրցույթների հայտատուների մրցութային փաթեթները:

▪ Տեղեկատվության ազատության և «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի մասով.

- Տեղեկություն տնօրինողներին պարտադրել կատարել օրենքով նախատեսված սեփական պարտականությունները տեղեկությունների տրամադրման պրոակտիվ և ռեակտիվ ռեժիմներում:
- Կառավարության կողմից ընդունել օրենքով նախատեսված տեղեկությունների մշակման, դասակարգման, պահպանման և տրամադրման կարգը:
- Պետական իշխանության մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների վեբ կայքերը բերել նույնական ստանդարտների:
- Մինչև 5.000 բնակչությամբ համայնքների համար ապահովել պաշտոնական վեբ կայքեր:

▪ Գովազդային օրենսդրության և համապատասխան օրենքներում կատարել լրացումներ, որոնցով կսահմանվի քողարկված զովազդը որպես հարկային զանցանք, կսահմանվի գովազդի ապրանքանշի անուղղակի տեղադրման (product placement) գովազդի տեսակը:

▪ Պետությունից տպագիր լրատվամիջոցներին հատկացվող օժանդակությունները դարձնել այդ լրատվամիջոցների վճարած հարկերի համամասնությամբ և պարտադիր հրապարակվող:

Այլ և խառը

- Օրենսդրական փոփոխություններով ներքին աուդիտի և պետական մարմինների կողմից պետական և համայնքային բյուջետային հիմնարկների աուդիտորական և այլ ստուգումների արդյունքները/եզրակացությունները դարձնել հրապարակային:
- Հրապարակային դարձնել պետական և համայնքային հիմնարկների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից/մասնակցությամբ ստեղծված բոլոր հիմնադրամների գործունեությունը՝ եկամուտների և ծախսերի մանրամասն տարեկան հաշվետվողականությամբ:
- Գույքի և եկամուտների մասին տարեկան հայտարարագրերի համակարգ ներդնել Հայաստանի բոլոր համայնքապետերի և 30.000-ից ավելի բնակիչ ունեցող համայնքների ավագանիների անդամների համար:
- Հրապարակային դարձնել ոստիկանության, դատախազության, դատարանական և քրեակատարողական համակարգերի կառուցվածքը, կադրային կազմը, թվակազմը:
- Բանակի համար արված գնումները՝ բացառությամբ զենքի, զինամթերքի և հարակից նյութերի գնումների, օրենսդրության փոփոխություններով դարձնել հրապարակային:
- Դատախազության, ոստիկանության, ԱԱԾ, դատարանական և քրեակատարողական համակարգերի գնումները օրենսդրության փոփոխություններով դարձնել հրապարակային:
- Բարեփոխել պետական և համայնքային կարիքների համար գնումների քաղաքականությունը՝ այն դարձնելով առավելագույնս թափանցիկ, հրապարակային դարձնել հրատապ գնումները և դրանց հիմնավորումները:

<u>«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպություն</u>

- Տարածել ՀՀ Տեղեկատվության ազատության մասին օրենքի գործողությունը նաև հանրային ռեսուրսներ օգտագործող կազմակերպությունների վրա:
- Կատարել փոփոխություններ և լրացումներ ՀՀ Հանրային ծառայության մասին օրենքում՝ նպատակ ունենալով.

- Ամբողջությամբ հրապարակային դարձնել բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների հայտարարագրերը,
- Ընդլայնել հայտարարագիր ներկայացնելու պարտավորություն ունեցող փոխկապակցված անձանց ցանկը,
- Ընդլայնել օրենքի շահերի բախումը կանխարգելող դրույթները բոլոր հանրային ծառայողների, ինչպես նաև պատգամավորների, սահմանադրական դատարանի անդամների, դատավորների և դատախազների վրա:

▪ Ընդունել նոր հակակոռուպցիոն ռազմավարություն իր միջոցառումների ծրագրով՝ կենտրոնանալով ոչ ավել քան 3-4 առանցքային ոլորտների վրա և նախատեսելով ռազմավարության դրույթների և ծրագրի միջոցառումների կիրարկումը համակարգող և դրա արդյունքները գնահատող մշտական հիմունքներով գործող մասնագիտացված մարմնի ստեղծում:

▪ Անդամակցել Արդյունահանող արդյունաբերության թափանցիկության նախաձեռնության (EITI)՝ ոլորտի ծախսերի և եկամուտների վերաբերյալ հանքարդյունաբերական ընկերությունների և պետության հաշվետվողականությունն ապահովելու նպատակով:

▪ Մեկ անձից կատարվող գնումների պրակտիկան սահմանափակելու նպատակով ՀՀ Գնումների մասին օրենքում սահմանել «գնման անհետաձգելի պահանջ» դրույթը:

▪ Ապահովել գնումների բողոքարկման խորհրդի իրական անկախությունը՝ նախևառաջ սահմանափակելով Գնումների աջակցման կենտրոնի՝ որպես բողոքարկման խորհրդի քարտուղարություն հանդես եկող մարմնի դերը: